



Կալիֆորնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Միանվագ վճարումներ և SSI իրավունակություն

Չոկտեմբեր 2017, Չրատ.՝ #5604.10

Ծանոթագրություն. Սույն հրապարակումը միայն ընդհանուր տեղեկություններ է պարունակում Յուրաքանչյուր անձի իրավիճակը տարբեր է: Առանձնահատուկ խորհրդի համար անպայման խորհրդակցեք փաստաբանի կամ շահերի պաշտպանի հետ, ով քաջատեղյակ է այս խնդիրներից:

Շատ մարդիկ հարցեր ունեն առ այն, թե ինչպես միանվագ (մեկ անգամ միայն տրվող) վճարումը կազդի իրենց Ապահովության լրացուցիչ եկամտի (SSI, Supplemental Security Income) իրավունակության վրա: Սույն հուշաթերթիկում կքննարկվեն միանվագ վճարումները, որոնք ազդում են SSI-ի իրավունակության վրա:

1. Ի՞նչ է միանվագ գումարը:

Չկրկնվող միանվագ վճարումը այն գումարի մեկանգամյա վճարումն է, որը չի ակնկալվում, որ Դուք ապագայում կրկին կստանաք: Այն չի ներառում Ձեր ամսական սոցիալական ապահովության վճարն, ինչպիսին SSI-ն է:

2. Որո՞նք են միանվագ գումարների օրինակները:

Միանվագ վճարումների օրինակները ներառում են մեկանգամյա, հետադարձ ուժ ունեցող սոցիալական ապահովության չեկ, հետադարձ ուժ ունեցող (IHSS, In-Home Supportive Services) վճարումներ,

Նվիրատվություն, ժառանգություն վիճակախաղի շահում և գումար, որն ստացվել է՝ եկամտին կամ ռեսուրսին փոխարինելու համար:

3. Ինչպե՞ս կարող է միանվագ գումարն ազդել իմ SSI նպաստների վրա:

Այն կարող է նվազեցնել ամսական SSI-ը, որը Դուք ստանում եք կամ Ձեզ անհրավունակ դարձնել SSI-ի համար: Սրա պատճառն այն է, որ Ձեր եկամուտները և ռեսուրսները կարող են ազդել Ձեր SSI-ի ամսական գումարի չափի վրա: Նախ, կարևոր է, որ Դուք հասկանաք SSI-ի իրավունակության մի քանի պահանջները և այն, թե SSI ծրագիրն ինչպես է սահմանում, թե ամեն ամիս Դուք որքան SSI կստանաք: Տե՛ս ստորև տրված հարց 7-ն՝ առ այն, թե ինչպես է SSI ծրագիրը որոշում Ձեր իրավունակությունը:

4. Ի՞նչ է եկամուտը:

Եկամուտը ցանկացած առարկա է, որը անհատը կանխիկ կամ ծառայության ձևով ստանում է, որը կարող է օգտագործվել՝ իր սննդի և կացարանի կարիքները բավարարելու համար:¹ «Ծառայության ձևով վճարված» եկամուտը նշանակում է ոչ-դրամական աջակցություն կամ աջակցություն ապրանքների կամ ծառայությունների ձևով (ինչպես օրինակ՝ սնունդ կամ կացարան)՝ դրամի փոխարեն:²

Ինչ վերաբերում է SSI իրավունակությանը, գոյություն ունի «վաստակած» և «չվաստակած» եկամուտ, որն օգտագործվում է որոշելու Ձեր ամսական նպաստի չափը: Վաստակած եկամուտն այն եկամուտն է, որը կարող է ստացվել կանխիկ կամ ծառայության տեսքով և բաղկացած է աշխատավարձերից, ինքնազբաղվածության գույք եկամուտներից, հաշմանդամ անձանց համար նախատեսված վերահսկվող աշխատավայրում կատարված ծառայությունների համար կատարված վճարումից կամ արտոնագրային վճարումների, որոնք անձը վաստակել է իր աշխատանքի հրապարակման կապակցությամբ: ³ SSI ծրագրում վաստակած եկամտի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500820000/>:⁴

Չվաստակած եկամուտն այն ողջ եկամուտն է, որը չի վաստակվել: ⁵ Օրինակ՝ հետադարձ ուժ ունեցող սոցիալական ապահովության նպաստները և ծառայության դիմաց աջակցությունը ⁶ չվաստակած եկամուտ են համարվում: Չվաստակած եկամտի մասին հավելյալ

տեղեկությունների համար այցելեք՝

<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500830000>: Ծառայության դիմաց կատարված աջակցության մասին հավելյալ տեղեկությունների համար տե՛ս մեր հարապարակումը՝

<https://www.disabilityrightsca.org/publications/ssi-applicants-and-recipients-learn-about-in-kind-support-and-maintenance-ism> Որոշ չվաստակած

եկամուտներ չեն հաշվարկվում Ձեր SSI-ի իրավունակության ներքո:

Այստեղ Դուք կարող եք փնտրել չվաստակած եկամտի

դասակարգումները, որոնք չեն հաշվարկվում SSI-ի իրավունակության ներքո՝ https://www.ssa.gov/OP_Home/cfr20/416/416-1124.htm և

<https://secure.ssa.gov/apps10/poms.nsf/lnx/0500830099>:⁷

Կան նաև բաներ, որոնք եկամուտ չեն համարվում: ⁸ Առարկան եկամուտ չէ, եթե այն ոչ սնունդ է ոչ էլ կացարան, կամ այն հնարավոր չէ օգտագործել սունդ կամ կացարան ձեռք բերելու համար: ⁹ Օրինակ՝ եթե ինչ-որ մեկը վճարում է Ձեր բժշկական հաշիվների, Ձեր հեռախոսի վարձավճարի, վետերանի Ձեր հաշվի համար կամ Դուք անվճար բժշկական ինսամբ եք ստանում, որի արժեքը եկամուտ չի համարվում Ձեզ համար: ¹⁰ Սակայն, նույնիսկ եթե առարկան եկամուտ չի համարվում, այն դեռ կարող է ռեսուրս համարվել, որը բացատրված է ստորև:

Մյուս բաները եկամուտ համարվում են, բայց բացառվում են՝ Ձեր ամսական եկամուտը որոշելիս: Ամսական վաստակած որևէ եկամտի առաջին 65 ԱՄՆ դոլարը գումարած մնացած եկամուտների կեսը բացառվում են SSI նպաստի հաշվարկման նպատակներով: ¹¹

Չվաստակած կամ վաստակած որևէ ամսական եկամտի առաջին 20 ԱՄՆ դոլարը նույնպես բացառվում է: ¹² SSI ծրագրում կան մի շարք չվաստակած եկամտի բացառություններ, ինչպիսիք են հողարկավորության ֆինանսական միջոցները, երեխաների աջակցությունը, կրթական օգնությունը, սննդային կտրոնները և այլն: Չվաստակած եկամտի բացառումների ցանկի համար այցելեք՝

<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500830099>:

5. Ի՞նչ է ռեսուրսը:

Ռեսուրսն այն բանն է, որը Դուք ունեք, օրինակ՝ կանխիկ գումար, հողատարածք, կյանքի ապահովագրություն, անձնական սեփականություն կամ որևէ այլ բան, որը Դուք ունեք և որը հնարավոր է կանխիկ գումարի վերածել և օգտագործել սննդի կամ կացարանի

համար: ¹³ Բացի այդ, այն, ինչ Դուք ձեռք կբերեք ռեսուրսի վաճառքից կամ փոխանակումից, ինչպիսին է օրինակ՝ տունը կամ մեքենան, այն ավելի շուտ ռեսուրս կմնա, քան եկամուտ կհամարվի: Տե՛ս բաժին 7(d) ստորև:

Անձը կարող է ընդամենը 2000 ԱՄՆ դոլարի արժեք ունեցող հարկերից չազատված ռեսուրսներ ունենալ, իսկ ամուսինները՝ 3000 ԱՄՆ դոլարին համարժեք ռեսուրսներ առաջին ամսվա առաջին րոպեից (ամսվա առաջին օրվա կեսգիշերին): ¹⁴ Հակառակ դեպքում Դուք անիրավունակ կլինեք այդ ամսվա SSI վճարման համար: Սա նշանակում է, որ եթե Դուք վճարում ստանաք, որը հաշվելի ռեսուրս կդառնա հաջորդ ամիս, Դուք պետք է ծախսեք մինչև 2000 (3000) ԱՄՆ դոլար հաշվարկելի ռեսուրսների մակարդակով՝ նախքան ամսվա սկիզբը՝ հաշիվ ապրանքագրին հաջորդող *ամսվա* սկիզբը, որպեսզի շարունակեք SSI-ի համար իրավունակ մնալ: *Ծանոթագրություն*. Ձեր բանկային հաշվում առկա գումարն այն գումարն է, որը ցույց է տրվում՝ հանած որևէ չվճարված չեկ (այն չեկերը, որոնք դեռ չեն վճարվել Ձեր հաշվից): ¹⁵

Որոշ բաներ բացառվում են ռեսուրսներից, որը նշանակում է, որ դրանք չեն հաշվարկվում Ձեր ռեսուրսի թույլատրելի չափում: Գոյություն ունեն չհարկվող ռեսուրսներ: Դրանք ներառում են տան ապրանքները, մեկ մեքենա , ¹⁶ տնային աջակցություն կամ հուղարկավորության տարածքներ: ¹⁷ Բացառված ռեսուրսների հավելյալ օրինակների համար այցելեք՝ https://www.ssa.gov/OP_Home/cfr20/416/416-1210.htm:¹⁸

6. Ի՞նչ է սպասելի ծառայությունը:

Երբեմն Ձեր կնոջ/ամուսնու կամ ծնողների (եթե երեխան 18 տարեկանից փոքր է) եկամուտը և ռեսուրսները ¹⁹ կարող են հաշվարկվել ըստ SSI-ի համար ունեցած Ձեր իրավունակության: Սա կոչվում է «սպասելի ծառայություն»: Սպասելի եկամուտը Ձեր կնոջ/ամուսնու, Ձեր ծնող(ներ)ի, ում հետ Դուք ապրում եք, կամ Ձեր հովանավորի (եթե Դուք օտարերկրացի եք) եկամտի մի մասն է, որը SSI ծրագիրն օգտագործում է՝ հաշվարկելու Ձեր հաշվելի եկամտի չափը, որը Ձեր իրավունակությունը և SSI-ի նպաստն է: ²⁰ Ամուսնու/կնոջ սպասելի եկամտի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.ssa.gov/ssi/text-income-ussi.htm>:²¹ For more information on deeming for children under age 18, visit <https://www.ssa.gov/ssi/spotlights/spot-deeming.htm>:²²

Եթե Դուք երեխա եք, ով SSI է ստանում, որևէ ռեսուրս, որի գումարը գերազանցում է 2000 ԱՄՆ դոլարը մեկ ծնողի համար կամ 3000 ԱՄՆ դոլարը երկու ծնողի համար, ում հետ Դուք ապրում եք, կհամարվի Ձերը: Որպես SSI ստացող, Դուք Ձեր սեփական 2000 ԱՄՆ դոլարի ռեսուրսի հատուցման իրավունք ունեք: Թոշակի անցնելու հաշիվը, որը ծնողի կամ կնոջ/ամուսնու անունով է, չի հարկվում և չի համարվի սպասելի, եթե ծնողը կամ ամուսինը/կինը SSI ստացող չէ:

7. Ինչպե՞ս է SSI ծրագիրը որոշում, թե ամեն ամիս ես որքա՞ն SSI պետք է ստանամ:

SSI-ը կարիքների վրա հիմնված լրացուցիչ եկամտի ծրագիր է այն իրավունակ անձանց համար, ովքեր հաշմանդամ, կույր կամ 65 տարեկան և ավելի են, ովքեր սահմանափակ եկամուտ և քիչ ռեսուրս ունեն: ²³ Այն լրացուցիչ եկամտի ծրագիր է, որովհետև այն նախատեսված է լրացուցիչ եկամուտ տրամադրելու՝ ի հավելումն այն եկամտի և ռեսուրսների, որոնք անհատն արդեն ստանում է: Սոցիալական ապահովության վարչությունը ((Social Security Administration (SSA)) որոշում է SSI-ի Ձեր իրավունակությունը՝ հիմնվելով այն եկամտի և ռեսուրսների չափի վրա, որոնք Դուք ունեք: Հիշեք, որ Դուք չեք կարող որպես անհատ 2000 դոլարից ավելի ռեսուրս ունենալ, կամ 3000 դոլար՝ որպես ամուսնական զույգ: Իրավունակության պահանջների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.ssa.gov/ssi/text-eligibility-ussi.htm>:

SSI-ի չափը, որը Դուք ստանում եք ամեն ամիս, որոշվում է ըստ Ձեր հաշմանդամության, տարիքի և կենսապայմանների: Տե՛ս աղյուսակը՝ <https://www.ssa.gov/pubs/EN-05-11125.pdf>: Այս գումարի չափն այնուհետև նվազում է որևէ հաշվելի եկամտի չափով, որը Դուք ունեք: Հաշվելի եկամուտն այն եկամտի չափն է, որը մնացել է ապրանքի բոլոր համապատասխան բացառումները կիրառելուց հետո, որոնք եկամուտ են: ²⁴

Եթե Ձեր հաշվելի եկամուտն ավելին է, քան Դուք ստանում եք SSI նպաստներից, ապա Դուք իրավունակ կլինեք SSI ստանալ այն ամիս, երբ Դուք ստացել եք այդ եկամուտը: ²⁵ Եթե հաշվելի եկամուտը ավելի քիչ է, քան SSI նպաստի վճարման չափը, ապա հաշվելի եկամուտը պետք է պահում կատարի SSI վճարումից, որը Դուք երկու ամիս անց եք ստանում: ²⁶ Ընթացիկ ամսում նպատները հաշվելու նպատակով նախորդ ամսից Ձեր եկամուտն օգտագործելու այս գործընթացը հայտնի

Է որպես հետահայաց ամսական հաշվապահական հաշվառում:
Չետահայաց հաշվապահական հաշվառման մասին հավելյալ
տեղեկությունների համար այցելեք՝

<https://secure.ssa.gov/poms.Nsf/Inx/0502005001>:

Վարժանքի հուշում. Եթե Դուք գիտեք, որ Ձեր եկամուտը, որն ամսական ստանում եք, կկրճատի Ձեր SSI նպաստի չափը կամ բավական բարձր կլինի՝ Ձեզ առհասարակ որևէ SSI եկամտի համար անհրաժեշտակ դարձնելու, մենք խորհուրդ ենք տալիս, որ երբ Դուք SSI-ին զեկուցում եք եկամտի մասին, գերվճարման գումարի չափի մասին դրամական հանձնարարագիր կամ գանձապահի չեկ ներառեք: Այդպես Ձեր SSI չեկերը կշարունակվեն առանց կրճատման և ընդհատման:

8. Ինչպես են վերաբերվում միանվագ վճարումներին:

Դա կախված է վճարման այն տեսակից, որը Դուք ստանում եք:

a. Չետադարձ ուժ ունեցող սոցիալական ապահովության վճարներ

Սովորաբար հետադարձ ուժ ունեցող սոցիալական ապահովության վճարումը, որը վճարվում է II Վերնագրի ներքո, ²⁷ ստացման ամսին համարվում է չվաստակված եկամուտ: ²⁸ Եթե դուք պատրաստվում եք հետադարձ ուժ ունեցող սոցիալական ապահովության վճարում ստանալ, այն նույնպես հարկից ազատված ռեսուրս կլինի այն ամիս, երբ Դուք այն կստանաք, և այն դրանից հետո կմնա որպես չհարկվող ռեսուրս հաջորդ 9 ամսվա ընթացքում: ²⁹ Եթե Դուք 9 ամսից հետո դեռ շարունակեք գումարն ունենալ, այն SSI-ի համար հաշվելի ռեսուրս կդառնա: ³⁰

b. IHSS վճարումներ

i. IHSS վճարումները, որոնք վճարվում են անհրաժեշտակ կնոջը/ամուսնուն կամ ծնողներին

«Անհրաժեշտակ» ծնող կամ ամուսին/կին նշանակում է, որ նրանք SSI նպաստներ չեն ստանում: IHSS հետադարձ ուժ ունեցող միանվագ վճարումները, որոնք կատարվում են անհրաժեշտակ ծնողին և կնոջը/ամուսնուն, ովքեր ծառայություններ են մատուցում իրենց անչափահաս երեխային կամ ամուսնուն/կնոջը, բացառված եկամուտ է սպասելի նպատակներով, այլ կերպ ասած, այն չի համարվում կամ

հաշվարկվում երեխայի կամ ամուսնու/կնոջ դեմ, ովքեր SSI նպաստներ են ստանում, և հետևաբար չի ազդում նրանց իրավունակության վրա: ³¹ IHSS-ի կանոնավոր վճարումները, որոնք կատարվում են անիրավունակ ծնողին կամ կնոջը/ամուսնուն, ովքեր ապրում են նույն տանը, չեն համարվում SSI: ³²

Թեև ընդհանուր կանոնն այն է, որ եկամուտը դառնում է ռեսուրս այն ամսից հետո, երբ այն ստանում եք՝ հատուկ կանոնի ներքո, IHSS-ի հետադարձ ուժ ունեցող միանվագ գումարը, որը վճարվել է անիրավունակ ծնողի կամ կնոջ/ամուսնու, բացառված ռեսուրս է համարվում այն ամսին, որը հաջորդում է ստացման ամսին: ³³ Սակայն, այն հաշվարկվում է որպես ռեսուրս ստացմանը հաջորդող երկրորդ օրացուցային ամսին և կհամարվի կնոջը/ամուսնունը կամ երեխայինը, եթե այն հետադարձ ուժ ունեցող միանվագ IHSS վճարում լինի: ³⁴ Օրինակ՝ եթե հետադարձ ուժ ունեցող IHSS վճարումը հունվար ամսին վճարվել է անիրավունակ կնոջը/ամուսնուն, ապա վճարումը բացառված ռեսուրս կլինի փետրվարին, բայց հաշվարկված ռեսուրս՝ մարտին՝ SSI-ի համար: ³⁵

ii. IHSS վճարումները, որոնք կատարվում են IHSS ստացողներին

IHSS վճարումները, որոնք կատարվում են IHSS ստացողին՝ վճարելու IHSS ծառայությունների դիմաց, որպես եկամուտ չեն հաշվարկվում ստացողի SSI իրավունակության համար: ³⁶ Այն նաև բացառվում է որպես ռեսուրս՝ ստացմանը հաջորդող ամսին: ³⁷ Սակայն, այն հաշվարկվում է որպես ռեսուրս՝ ստացմանը հաջորդող երկրորդ ամսին: ³⁸ Օրինակ՝ եթե հունվար ամսին IHSS վճարում է կատարվել IHSS ստացողին, վճարումը բացառված ռեսուրս կլինի փետրվարին, բայց մարտին՝ հաշվարկված ռեսուրս:

c. Սոցիալական ապահովության չկրկնվող միանվագ վճարումներ

Սոցիալական ապահովության չկրկնվող միանվագ վճարումները ներառում են երկաթուղիների կենսաթողակային նպաստները, վետերանների նպաստները, բանվորների փոխհատուցումները և հաշմանդամության ապահովագրության նպաստները: ³⁹ SSI-ի ներքո այս նպաստները չվաստակած եկամուտ են այն ամսին, երբ Դուք դրանք ստանում եք, իսկ հաջորդ ամսին՝ հաշվարկելի ռեսուրս: ⁴⁰ Կարևոր է

նշել, որ սոցիալական ապահովությունը կարող է որպես ռեսուրս հաշվարկել այն չվաստակած եկամտի ավելի կամ պակաս չափը, որը Դուք փաստացի ստացել եք, իսկ կանոնները տարբեր են՝ կախված Ձեր իրավիճակից: [41](#)

Օրինակ 20 Դաշնային կանոնակարգերի օրենսգրքից (C.F.R.) § 416.1123. Ջոն, ով SSI նպաստառու է, նույնպես սոցիալական ապահովության ապահովագրության իրավունք ունը՝ ամսական 200 ԱՄՆ դոլարի չափով: Սակայն, նրա սոցիալական ապահովության ապահովագրության նպաստների նախկին գերվճարումների պաճառով ամեն ամիս 20 ԱՄՆ դոլար պահում է կատարվում՝ գերվճարումը ծածկելու համար: Որոշելու նրա SSI նպաստների չափը՝ սոցիալական ապահովության ապահովագրության ողջ ամսվա 200 ԱՄՆ դոլար նպաստը ներառվում է Ջոյի չվաստակած եկամտում: Սակայն, եթե Ջոն երկու նպաստներն էլ ստանում էր, երբ սոցիալական ապահովության ապահովագրության նպաստների գերվճարումը տեղի ունեցավ, իսկ հետո մենք ներառեցինք գերվճարված գումարի չափը որպես եկամուտ, մենք պետք է հաշվեինք նրա SSI նպաստը՝ հիմնվելով նրա վրա, որ նա 180 ԱՄՆ դոլար է ստանում որպես սոցիալական ապահովության ապահովագրության նպաստ: Սա այն պատճառով է, որ մենք ընդունում ենք, որ մենք հաշվարկել ենք նրա SSI նպաստը՝ հիմնվելով ավելի բարձր գումարի չափի վրա, երբ նա գերվճարվեց:

d. Եկամտի կամ ռեսուրսի փոխարինում

Որոշ առարկաներ, որոնք Դուք ստանում եք, արդեն մեկ անգամ որպես եկամուտ են հաշվարկվել՝ այս կամ այն ձևով: Կրկնահաշվարկից խուսափելու համար այս առարկաները որպես եկամուտ չեն հաշվարկվում SSI-ի համար: Օրինակ՝ հարկային որոշ վերաֆինանսավորումներ կամ եկամուտ չեն կամ բացառված են [42](#)եկամտից: [43](#) Ձեզ տրվող կյանքի և հաշմանդամության ապահովագրության վճարումները եկամուտ չեն: [44](#)

Գումարը, որը Դուք պարտքով եք վերցնում կամ գումարը, որը Դուք ստանում եք որպես վերավճարում փոխառության դիմաց, եկամուտ չէ, այլ՝ ռեսուրս: [45](#) Բացի այդ, որոշ ապրանքներ, որոնք Դուք ստանում եք, ոչ թե եկամուտ են, այլ՝ ռեսուրս: Օրինակ՝ վաճառքից ստացված հասույթը, ռեսուրսի փոխանակումը կամ փոխարինումը (օրինակ՝ մեքենայի վաճառք) ոչ թե եկամուտ են, այլ՝ ռեսուրս: [46](#) Վերոնշյալ «Ռեսուրսներ» բաժնում ինչպես նշվեց, այս առարկաները համարվում են

ռեսուրսներ ստացմանը հաջորդող ամսվա առաջին պահից սկսած: Եթե Դուք սեպտեմբերին պարտքով գումար վերցնեք, այն սեպտեմբերին եկամուտ չի համարվի, բայց այն հոկտեմբերի առաջին օրից ռեսուրս կհամարվի:

Եթե Դուք կանխիկ ստանաք բացառված ռեսուրսը վերանորոգելու կամ փոխարինելու նպատակով, ինչպես օրինակ Ձեր տունն է, որից դուք զրկվել եք, վնասվել կամ թալանվել է, Դուք կանխիկ գումարն ստանալուց հետո 9 ամիս ժամանակ ունեք՝ վերանորոգելու կամ փոխարինելու ռեսուրսը՝ նախքան կանխիկը ռեսուրս կհամարվի: [47](#) Սա կարող է երկարաձգվել լրացուցիչ 9 ամիս ևս, եթե Դուք պատշաճ պատճառ ցույց տաք: [48](#) Հակառակ դեպքում՝ կանխիկ գումարը հաշվելի ռեսուրս կդառնա: [49](#) Կանխիկ գումարը նույնպես հաշվելի ռեսուրս կդառնա, եթե Դուք փոխեք գույքը նորոգելու կամ փոխարինելու Ձեր մտադրությունը: [50](#)

e. Չհարկվող եկամուտ և ռեսուրսներ

Որոշ առարկաներ առհասարակ որպես եկամուտ կամ ռեսուրս չեն հաշվարկվում: Ադետի նպաստը մի օրինակ է, որը դասակարգվում է որպես «չվաստակած եկամուտ», բայց ազատված է Ձեր եկամտի ամրագրումից, ինչպես նաև բացառված է Ձեր ռեսուրսի թույլատրելի չափից: [51](#) Մեկ այլ օրինակ են վճարումները, որոնք կատարվել են Ձեզ նահանգային կամ տեղական պետական մարմինների կողմից, եթե Դուք հանցագործության զոհ եք եղել: [52](#)

f. Այլ միանվագ վճարումներ

Եթե Դուք պետք է որևէ այլ տեսակի միանվագ վճարում ստանաք (օրինակ՝ ժառանգություն, նվեր, կյանքի ապահովագրության վճարում կամ պարգևավճար Ձեր աշխատանքի դիմաց), այն հաշվելի եկամուտ կհամարվի այն ամիս, երբ այն ստանաք, իսկ հաջորդ ամիս՝ հաշվելի ռեսուրս: [53](#)

9. Ինչպե՞ս կարող եմ ամբողջությամբ սպառել միանվագ վճարումը:

Եթե Դուք միանվագ վճարում ստանաք, Դուք կարող եք ցանկանալ այդ գումարն ամբողջությամբ սպառել: Դուք կարող եք դա անել՝ գումարը հարկից ազատված ռեսուրսի վրա ծախսելով, ինչպիսին է տունը, մեքենան, տան ապրանքները և անձնական գույք, ինքնօգնության

համար կարևոր գույք, ժամկետով կյանքի ապահովագրություն, հուղարկավորության ընթացակարգ և հուղարկավորության ապահովագրություն կամ գումարը մի կողմ դնել ծրագրում՝ ինքնօգնության հասնելու համար ((Plan to Achieve Self Support (PASS)):
[54](#)

Բացի այդ, եթե Դուք միանվագ գումար ստանաք և այն ծախսեք արդար շուկայական գնից ավելի քիչ արժեքների վրա, Դուք կարող եք մինչև 3 տարի անհրավունակ լինել SSI-ի համար: (Սույն խնդրի քննարկումը չի մտնում այս հուշագրի շրջանակների մեջ): Հավելյալ տեղեկությունների համար այցելել՝ <https://secure.ssa.gov/apps10/poms.nsf/lnx/0501150007>:

10. Ի՞նչ կասեք մենաշնորհ ունեցող ընկերությունների խմբի (միավորումների) և ABLE հաշիվների մասին:

Եթե Դուք միանվագ մեծ գումար ստանաք, Դուք կարող եք ցանկանալ այն փոխանցել միավորումների կամ ABLE հաշվի:

a. Մենաշնորհ ունեցող ընկերությունների խումբ (միավորումներ)

Մեկ ընտրանքը կարող լինել դրամի մեկ մասը կամ ամբողջը տրամադրել այսպես կոչված OBRA միավորմանը, ինչպես օրինակ ընդանուր ֆոնդի միավորումն է, որի միջոցով Դուք կկարողանաք օգտագործել դրամը՝ բարելավելու Ձեր կյանքի որակը՝ առանց Ձեր նպաստները կորցնելու: [55](#)

Դուք նաև կարող եք Հատուկ կարիքների միավորում ստեղծել (Special Needs Trust):[56](#) Հատուկ կարիքների միավորումների մասին օրենքի փոփոխությունները այժմ հաշմանդամ անձանց միավորումների նպաստառուների համար հնարավոր են դարձնում նման միավորում ստեղծելն իրենց համար՝ հաշմանդամ նպաստառու ծնողից, տատկից, պապիկից, օրինավոր ինսամակալից կամ դատարանից նման միավորումն ստեղծելու ինդրանքի փոխարեն: [57](#) Այս փոփոխությունն ուժի մեջ է այն միավորումների համար, որոնք ստեղծվել են 2016թ. դեկտեմբերի 13-ին կամ դրանից հետո: [58](#) Կարևոր է նշել, որ միավորումը պետք է նպաստառուի համար ստեղծվի՝ նախքան նա կդառնա 65 տարեկան: [59](#)

Այս և այլ ընտրանքների մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար մենք առաջարկում ենք, որ Դուք դիմեք Ճերանգների բարեփոխումներով զբաղվող Կալիֆորնիայի շահերի պաշտպաններին (California Advocates for Nursing Home Reform) www.canhr.org – Խորհրդի և ուղղորդման համար՝ փաստաբանի, ով մասնագիտացած է այս ոլորտներում: ⁶⁰

b. ABLE հաշիվներ

Դուք նաև կարող եք այցելել Կալիֆորնիա նահանգի դրամամիջոցների գլխավոր կառավարչի կայքէջ՝ CalABLE հաշիվների մասին տեղեկություններ ստանալու համար: Մատչելի է՝ <http://treasurer.ca.gov/able>:⁶¹ Եթե նախքան 26 տարեկան դառնալը Դուք հաշմանդամ դառնաք, Դուք կարող եք տարեկան մինչև 14,000 ԱՄՆ դոլար խնայել, և մինչև 100,000 ԱՄՆ դոլար ընդհանուր չափով՝ օպտիմիզացված հարկային խնայողությունների հաշվի դեպքում, որը կոչվում է ABLE հաշիվ՝ նախքան դա Ձեր SSI-ի կամ Medi-Cal-ի վրա կազդի: ⁶² Սա նշանակում է, որ եթե Դուք ABLE հաշվում դրամ խնայեք, ապա հաշվելի ռեսուրսների թույլատրելի չափերը չեն ազդի Ձեր SSI-ի կամ Medi-Cal-ի վրա՝ մինչև 100,000 ԱՄՆ դոլարի դեպքում: Բացի այդ, Դուք կարող եք և՛ ABLE հաշիվ և՛ հատուկ կարիքների միավորում ունենալ:

Ձեր ABLE հաշվից դուրս եկած բաշխումները եկամուտ չեն համարվի և Դուք կարող եք Ձեր ABLE հաշվի գումարն օգտագործել՝ որակավորման ծախսերի համար, ինչպիսիք են ապաստարանը, փոխադրամիջոցը և առողջապահական խնամքը: ⁶³ ABLE հաշվի մեկ այլ օգուտն այն է, որ Դուք կարող եք հաշվից գումար ստանալ և այն որպես ռեսուրս չի հաշվարկվի այնքան ժամանակ, քանի դեռ Դուք պահում եք գումարը՝ վճարելու կացարանի հետ կապ չունեցող հաշմանդամ անձանց մասնակի ծախսերի համար: ⁶⁴ Օրինակ՝ եթե Դուք հունիս ամսին 500 ԱՄՆ դոլար եք հանել Ձեր հաշվից՝ վճարելու ակնկալվող բժշկական ծախսի համար, որը տեղի կունենա Սեպտեմբերին, ապա այդ 500 ԱՄՆ դոլարը չի հաշվարկվի որպես ռեսուրս հունիս, հուլիս, օգոստոս կամ սեպտեմբեր ամիսներին: ⁶⁵

11. Ես պարտավոր եմ SSA-ին գեկուլցել դրամի մասին:

Այո. Դուք պարտավոր եք սոցիալական ապահովությանը տեղեկացնել վճարման մասին երբ որ Դուք այն ստանաք, բայց ոչ ուշ, քան այն ամիս

Էջ 12՝ 19-ից

10^{րդ} օրը, երբ Դուք այն ստացել եք: ⁶⁶ Օրինակ՝ եթե Դուք վճարումն ստանում եք դեկտեմբերին, ապա ստիպված եք սոցիալական ապահովությանն այդ մասին տեղյակ պահել մինչև հունվարի 10^{-ը}:

12. Ի՞նչ պետք է անեմ, եթե միանվագ վճարում ստանամ:

Եթե Դուք միանվագ վճարում ստանաք, միշտ լավագույն տարբերակը որևէ շահերի պաշտպանի կամ փաստաբանի հետ խոսելն է, ով քաջատեղյակ է SSI իրավունակությունից, ինչպես նաև SSI-ի իրավունակության վրա միանվագ գումարի ազդեցությունից:

[Մենք գանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես եք Դուք:](https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1)

<https://docs.google.com/forms/d/1d6ezTI2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով(Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝

<http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.

¹ 20 C.F.R § 416.1102; P.O.M.S. SI 00810.005, մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500810005>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

² <https://www.ssa.gov/ssi/text-income-ussi.htm> [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³ P.O.M.S. SI 00820.001, մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500820001>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴ Վաստակած եկամուտներին վերաբերող կանոնները նկարագրված են՝
[20 C.F.R. § 416.1110 մինչև 416.1112. «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵ P.O.M.S. SI 00830.001, մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500830001>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶ Վճարային աջակցությունը և պահպանումը (ISM) չվաստակած եկամուտ է՝ սննդի կամ կացարանի կամ և՛ սննդի և՛ կացարանի տեսքով:
P.O.M.S. SI 00835.001, մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500835001>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁷ Չվաստակած եկամուտներին վերաբերող կանոնները նկարագրված են
[20 C.F.R. § 416.1120 մինչև 416.1124. «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁸ 20 C.F.R. § 416.1103: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁹ P.O.M.S. SI 00815.001, մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500815001>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁰ Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝
<https://www.ssa.gov/oact/cola/incomexcluded.html>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹¹ Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.ssa.gov/oact/cola/incomexcluded.html>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹² Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.ssa.gov/oact/cola/incomexcluded.html>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹³ Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://www.ssa.gov/ssi/text-resource-ussi.htm>. [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁴ 20 C.F.R §§ 416.1207(d) և 416.1205(c). [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁵ P.O.M.S SI 01140.200.G.3, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501140200>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁶ *Տե՛ս* ստորև տրված 19-րդ տողատակը, որտեղ տեղեկություններ կան լրացուցիչ չհարկվող ռեսուրսների մասին, որոնք վերաբերում են ինքնազբաղվածությանը կամ այն բիզնեսի կամ ապրանքների, որոնք աշխատակիցն օգտագործում է, ինչպես օրինակ՝ երկրորդ մեքենա: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁷ 20 C.F.R. § 416.1210 (ընդհանուր բացառություններ ռեսուրսներից): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁸ *Տե՛ս* տողատակ X-ը, որը վերաբերում է օրենքի այն փոփոխություններին, որոնք ազդում են առնվազն 20 CFR § 416.1222-ին: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

¹⁹ Ռեսուրսների սպասման համար կանոնների մասին նայեք՝ 20 C.F.R. §§ 416.1202, 416.1203, և 416.1204: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁰ 1989թ. OBRA-ն ընդլայնեց գույքի բացառումը, որն անհրաժեշտ է ինքնօգնության համար՝ վերացնելով ցանկացած դուլարային կամ վերադարձի թույլատրելի չափերը, այդ թվում՝ բիզնեսի կանխիկ հաշիվները, ինչպես նաև բացառեց այն գույքը, որն օգտագործվում է

աշխատակցի կողմից աշխատանքում: Բաժին 8104, հրատ.՝ L. 101-239, ուժի մեջ է 1990թ. մայիսից, գաղտնագրված է՝ 42 U.S.C.: § 1382b(a)(3), և չվավերացնող ընդհարվող դրույթները՝ 20 C.F.R §§ 416.1220 և 416.1222: Օրինակ, երկրորդ փոխադրամիջոցն ընտանիքում կարող է բացառվել, եթե այն օգտագործվի աշխատանքում, այդ թվում ապրանքները վերցնելու կամ առաքելու համար, այլ տեղանքներում հանդիպման գնալու համար: Անձը կարող է վիճարկել, որ երկրորդ փոխադրամիջոցը պետք է հարկից ազատվի, երբ անհրաժեշտ է դրանով գնալ աշխատանքի և վերադառնալ տուն: Սակայն սրա համար օրինավոր պետական մարմին չկա: Օրենսդրական կարգով սահմանումից 28 տարի անց SSA-ը պետք է թարմացնի կանոնակարգերը: P.O.M.S. SI 0501130.500, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/apps10/poms.nsf/lnx/0501130500>, և P.O.M.S: SI 0501130.501, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/apps10/poms.nsf/lnx/0501130501>: Չվաստակած եկամտի բացառությունների մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝ <https://secure.ssa.gov/apps10/poms.nsf/lnx/0500830099>:
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²¹ Դուք կարող եք նայել՝ 20 C.F.R. §§ 416.1161 և 416.1163:
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²² Դուք կարող եք նայել՝ 20 C.F.R. §§ 416.1161 և 416.1165:
«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²³ Հավելյալ տեղեկությունների համար այցելել՝ <https://www.ssa.gov/pubs/EN-05-11000.pdf>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²⁴ Հավելյալ տեղեկությունների համար այցելել՝ <https://www.ssa.gov/oact/cola/countableincome.html> և <https://www.ssa.gov/oact/cola/incomexcluded.html>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²⁵ 20 C.F.R §§ 416.202(c) և 416.420: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²⁶ 20 C.F.R § 416.420(a). P.O.M.S. SI 02005.001, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0502005001>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²⁷ Վերնագիր II-ի նպաստները ներառում են թոշակառուի, պատահարից տուժածի և հաշմանդամության ապահովագրություն: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

²⁸ 20 C.F.R. § 416.1123(d). P.O.M.S. SI 00830.210, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500830210>. Տե՛ս նաև P.O.M.S. SI 03020.040, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0603020040>. Տե՛ս նաև P.O.M.S. SI 00830.010 բացառությունների համար մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0500830010#b>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

²⁹ 20 C.F.R. § 416.1233. Տե՛ս նաև՝ <https://www.ssa.gov/pubs/EN-05-11015.pdf>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

³⁰ 20 C.F.R. § 416.1233. Տե՛ս նաև՝ <https://www.ssa.gov/pubs/EN-05-11015.pdf>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

³¹ 20 C.F.R. § 416.1201(a)(3). 20 C.F.R. 416.1161(a)(16). P.O.M.S. SI 01320.175(B), մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501320175>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

³² 20 C.F.R. § 416.1161(a)(16): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³³ 20 C.F.R. § 416.1201(a)(3): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁴ 20 C.F.R. § 416.1201(a)(3). P.O.M.S. SI 01120.112(B)(1), մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501120112>: «Վերադառնալ հիմնական փաստաթղթին»

³⁵ Վճարումը եկամուտ է այն անձի համար, որը ինքնուրույն կամ ծառայություններ է տրամադրում: Եթե անիրավունակ կինը/ամուսինը կամ ծնողը տնային աջակցության ծառայությունների վճարումներ են ստանում այն ծառայությունների համար, որոնք տրամադրվում են նրա

իրավունակ ամուսնուց/կնոջից կամ երեխայից բացի այլ մեկի, ապա վճարումները ներառվում են եկամտի մեջ, որը ենթադրում է սպասելի ծառայություն: (P.O.M.S. SI 01320.175, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501320175>): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁶ 20 C.F.R. 416.1103(b)(1). Տնային աջակցության ծառայությունների (առօրյա գործեր, սպասարկող, տան աշխատող) վճարումները բժշկական կամ սոցիալական ծառայություններ են և եկամուտ չեն համարվում, երբ ուղղակիորեն վճարվում են իրավունակ անձին՝ ծառայությունների դիմաց վճարելու համար (P.O.M.S. SI 00815.050): Սակայն, վճարումը եկամուտ է այն անձի համար, ով խնամք կամ ծառայություններ է տրամադրում (Ծրագրի գործողությունների ձեռնարկի համակարգ) (P.O.M.S. SI 01320.175, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501320175>): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁷ 20 C.F.R. § 416.1201(a)(3): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁸ 20 C.F.R. § 416.1201(a)(3): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

³⁹ 20 C.F.R. § 416.1121(a): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁰ 20 C.F.R. §§ 416.1121, 416.1207(d): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴¹ 20 C.F.R. § 416.1123(b): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴² 20 C.F.R. § 416.1103(d): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴³ 20 C.F.R. § 416.1124(c)(1): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁴ 20 C.F.R. § 416.1103(e): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁵ 20 C.F.R. § 416.1103(f): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁶ 20 C.F.R. §§ 416.1103(c), 416.1207(e): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁷ 20 C.F.R § 416.1232(a): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁸ 20 C.F.R. § 416.1232(b): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁴⁹ 20 C.F.R § 416.1232(a): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁰ 20 C.F.R. § 416.1232(d): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵¹ 20 C.F.R § 416.1124(c)(5) և 20 C.F.R. § 416.1210(k): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵² 20 C.F.R. § 416.1124(c)(17) և 20 C.F.R. § 416.1210(p) (այն վճարումները, որոնք ստացվել են որպես փոխահատուցում այն ծախսերի կամ կորուստների համար, որոնք առաջացել հանցագործության արդյունքում): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵³ 20 C.F.R §§ 416.1104 (SSI հաշվարկված եկամուտ), 416.1120 (SSI չփաստակած եկամուտ), 416.1207 (SSI ռեսուրսի սահմանումներ). *տե՛ս նաև* P.O.M.S. SI 00810.410, Անուղղակի եկամտի բացառման հազվադեպ դեպքեր, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/apps10/poms.nsf/lnx/0500810410#c>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁴ 20 C.F.R § 416.1210. [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁵ P.O.M.S. SI 01120.200, մատչելի է՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501120200>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁶ 22 C.C.R. § 50489.9. [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁷ ACWDL թիվ 17-13, մատչելի է՝ <http://www.dhcs.ca.gov/services/medical/eligibility/Documents/ACWDL2017/ACWDL17-13.pdf>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁸ ACWDL թիվ 17-13, մատչելի է՝ <http://www.dhcs.ca.gov/services/medical/eligibility/Documents/ACWDL2017/ACWDL17-13.pdf>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁵⁹ 42 USC § 1396p(d)(4)(A): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶⁰ Հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝
http://canhr.org/publications/newsletters/NetNews/Feature_Article/NN_2007Q1.htm: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶¹ Հավելյալ տեղեկությունների համար տե՛ս նաև՝
<http://treasurer.ca.gov/able/resources/factsheets/factsheet-en-us.pdf> և
<http://treasurer.ca.gov/able/resources/faq.pdf> [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶² 26 U.S.C. § 529A. P.O.M.S. SI 01130.740, մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501130740>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶³ P.O.M.S. SI 01130.740(C), մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501130740>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶⁴ P.O.M.S. SI 01130.740(C)(5)(a), մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501130740>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶⁵ P.O.M.S. SI 01130.740(C)(5)(c), մատչելի է՝
<https://secure.ssa.gov/poms.nsf/lnx/0501130740>: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

⁶⁶ 20 C.F.R. § 416.714(a): [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)